

— Այս օրերը յարգելի նախա-
գահն յատարարութեան հետ, զըր-
բոյիկի ձեռվ լայս պիտի տեսնէ նոյ
ռուցելիք մը և անոր կցեալ ընդ
լայնուած Մրազիւր մը:

— Միութիւնը մասնաւոր զե-
կոյցով կը հրքէ ան հանդիմ տարա-
ձայնութիւններ, ըստ որում չ'ըլլորիք
ան մերժած է իր օգնութիւնը ալ
Հայ Կաթողիկ Մարապականերու Սն
ՃԵՍՈՒՆԻՆ ՈՐՐԱՆՈՅԻՆ:

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔ

ՅԱՐԺԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկուայի տրուած վերջին ժամանակներէն ինչպէս որ ցոյց կուտան թէ շարժին պատճառաւ վնասները հետեւեալներն են.

Սիմիւնի շրջանին մէջ 28 զիւղեր ամբողջութեամբ, և 27 զիւղեր մասամբ կործանած են: Կոն 219 մեռաւորներ, 277 վիրաւորներ և 5,500 կենդանիներ ոչնչացած:

Կերճի շրջանին մէջ 110 մեռաւորներ և 225 վիրաւորներ:

ՔԱՅԻՆԻ շրջանին մէջ 30 մեռաւորներ և բազմաթիւ վիրաւորներ:

Միւլի շրջանին մէջ 50 զիւղեր ամբողջ, զոհերուն թիւը չէ ճշդագում:

ՆԱԽԻՉԵՆԻ շրջանին մէջ բազմաթիւ զիւղեր կործանած, զոհերուն և կորուստներուն թիւը չէ ճշդագում:

Երեսնէն ՀՕԿԻ և Կարմիր Սալի կեղերն. վարչութիւնները հեռագրով օգնութիւն խնդրած են Պրանսայի իրենց ճիւղերէն:

Սորիքային Միութիւնը անմիջապէս 2 միլիոն ուսուցիչի նպաստ հասցուցած է աղէտահարներուն:

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԶԳԱՏ ՊԱՐՏՔԵՐԷՆ

Անցեալ Ապրիլ 26-ին Անգլիոյ Դիւմապիւն Նախարար Պ. Մոուտըն խորհրդարանին ներկայացուցած է Անգլիոյ պահանջները օտար պետութիւններէն: Այս պահանջացուցակին մէջ կայ նաեւ Հայաստանի «ազգային պարտքեր»ը, Դաշնակառավարութեան օրով եղած: Այդ պարտքերուն զուտարը կը հասնի 1,375,000 անգլ. ֆունտին, որ տարուէ տարի կ'աւելնայ 50/0 տոկոսի բարձրումով:

ԴԻՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Փարիզի Գաղթ. Կեդր. Յանձնաժողովը դիմած է Հայաստանի Դործավարներուն խորհուրդին, որպէսզի Յունաստանի դաղթականներուն գոնէ մէկ մասը Հայաստան փոխադրուին:

ԲԱՆԿԱԼԹԻԻ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԴԱՏԸ

Բանկալիկի գերիգմանատան ծառայող մասին Պոլսոյ քաղաքային Դ. ատենը տուած է հետեւեալ վճիռը.

«Նկատելով որ դատը կը բաղկանայ սա պահանջին թէ հակառակորդ կողմին միջամտութիւնը վերցնելու է և ըստ այնմ արագորէն է կառուածը որուն համար կը պընդուի թէ հայ համայնքին կը պատկանի»:

«Նկատելով որ բարոյական անգիւրու «Էշխապը հիւրմէն» օրէնքին չորրորդ յօդուածին և քաղաքային օրէնքին համաձայն, դատախազը, իրեն պետք «Էշխա» յիշեալ համայնքին, իրաւունք ունի իբր դատախազ ներկայանալու հակառակորդ պաշտօնատան:

«Որոշուեցաւ մերժել հակառակորդ կողմին այն պնդումը թէ յիշեալ պետք իրաւաստ է դատ բանալու»:

Այս վճիռը իր կարեւոր նշանակութիւնը ունի, որովհետեւ ատով Թուրք կառավարութիւնը ընդունած կըլայ, թէ կայ հայ համայնք և պատրիարքութիւն:

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՋ

Կեսաբային կը գրին «Նոր Լուր» թէ Առաջնորդարանէն հրահանգ տրուած է Էլիզաբէ-Ֆէնէսէ, Սօզկատ Պողպուլեան և Պուրէն Գըլա ընտրել իրենց քահանայացուները: Իւրաքանչիւրը աւելի քան 100 տուն ընկալուին: Քահանայացուները Պոլսոյ պիտի զրկուին ձեռնադրուելու համար:

Պոլսոյ հայ վաճառականներէն ոմանք Զատիկին հոն գացած և այցելած են Առաջնորդարանը և եկեղեցին: Պ. Ս. Եսաեան որ հոն գացած է Ֆէնէսէի հետ վաճառատան գործերով նպաստած է որոշանքներ:

ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Երկու Հայրապետներուն ՀԱՆՊԵՆ - ՊԵՅՐՈՒԹ

Վեհափառ Հայրապետները, 9 Մայիս, Շարաք առաստա ժամը 7.40-ի, կառավարութեամբ մեկնեցան Հալպէն գլխի Պէյրուք: Իրենց կ'ընկերանար Հալպէն առաջնորդ Սրտաւազ Սպ. Սիրմէն:

ՀԱՄԱ. — Թաղականութիւնը ամբողջ հայութեան հետ փութացած էր կայարան: Ծաղկեփռներ ներկայացուցին վեհափառներուն և կայստեւաջանաւորները մը յետոյ, կառավարութեամբ շարժեցաւ դէպի Հոմ:

ՈՐՄ. — Նոյնպէս թաղականութիւնը և ամբողջ ժողովուրդը փութացած էր կայարան: Կարճ տեսակցութիւնէ մը և աջահարկներէ մը յետոյ, կառավարութեամբ շարժեցաւ դէպի Պա'աւ-Պէք:

ՊԱՄԱ-ՊԵՐ. — Բայազէն մասնաւոր դիմաւորութեան եկած էին տեղւոյն երեքը՝ Սրտ. Տ. Ղազարեան քան. Գրճըրեան, և ուրիշներ:

ԲԱՅԱՊ. — Կառավարութեան հասաւ ժամը 4.30-ին: Ընդունելութեան պատշաճ նախապատրաստութիւններ եղած էին: Դպրոցական աղաք շարքի եկած կ'ուսուցիչներ վեհափառներու ժամանումին: Տեղւոյն թաղականութիւնը և ժողովուրդը խանդավառ ցոյցերով ընդունեցին հասնող վեհափառ կաթողիկոսները: Ոչխար մը զոհ կտրեցին, և վեհափառները պատուաւորեցին կայարանի պիւֆէի սրահին մէջ:

Զահլէն մեծ թիւով դիմաւորողներ եկած էին Բայազէ: Թափօրը մեծ շուքով մեկնեցաւ Զահլէ:

ԶԱՀԼԻ. — Շարաք, կէսօրէ վերջ ժամը 5.30-ին օթոներով Զահլէ հասան: Ազգ. Պալլադեան վրձ. խաչակերտութիւնը «ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ով առաջնորդեց զանոնք եկ' զիջի. ժողովրդական բազմախումբ զանգուած մը կը լեցունէր ամէն կողմ: Խանդավառութիւնը շատ մեծ էր. ամբողջ Հայրապետ օրհնեց ծովածաւալ բազմութիւնը և խոստացաւ քաղաքի կրթական առաւելում:

Վեհափառները հիւրասիրուեցան պանդոկ լիբանանի մէջ, ուր ինչ և զիւրուան ժամը 8-ը պաշտօնական այցելութիւններ եղան:

Կիրակի առաւօտ, յետ ժամկէտութեան, քաղաքեց ամբողջ Հայրապետը, նիւթ ունենալով Գրիգոր Լուսաւորիչի կենքը:

Եկեղեցիէն յետոյ, նորաօծ վեհափառը մասնաւոր հրաւերով մեծ պատուով հիւրասիրուեցաւ տեղացի օրթոթոքս եկեղեցի մը տունը:

Ժամը 10-ին ամբողջ վեհափառը նախագահեց Հ. Բ. Ը. Միութեան Արժանաւոր Յարգանքներ, և քաղաքեց աւելի քան 400 մամ. Հանդիսակատարութեանց ընթացքին միշտ կը նուազէր Մերձ. Արեւելքի Ուրբեա Միութեան ֆանֆարը:

Կէսօրէ վերջ ժամը 1.30-ին վեհ. Հայրապետները մեկնեցան Պէյրուք՝ դիմաւորութեան եկողներուն մեծ թափօրով մը:

ԱՀԼԻ. — Հոս կ'ապասէր Ալէքսանդր հայկաբ, և Պէյրուքէն դիմաւորութեան գացածներուն մեծ բազմութիւնը: ԱՀԼԻ «ԿԻՐԱՅԻՐՈՍ ՄԻՈՒԹԻՒՆ»-ը հայկապ կամար մը կանգնած էր, որուն վրայ կը կարգացուէր — «Բարի եկան վեհափառները»: Հոս 10 վայրկեան սպասուէ և աջահարկէ յետոյ մեկնեցան Պէյրուք:

ՊԵՐՈՒԹ. — Երբ վեհափառներուն հետեւող հանգիստաւոր թափօրը հասաւ Յունի Շիպէք (Պէյրուքի մուտքը), Ս. Նշան եկեղեցիին զանգակը սկըսաւ հնչել, աւելի քան մէկ ժամ: Փողոցներու մէջ անանցանելի ըլլալու չափ մեծ բազմութիւն խոնուած էր: Ընդունելութեան կարգադիր յանձնախումբը ամէն նախապատրաստութիւն ըրած էր պատշաճօրէն: Եկեղեցւոյ մուտքի մեծ դրան վրայ կը կանգնէր կանանչագորգ կամար մը, որուն վերային մեծ խաչին երկու կողմերը կը ծածանէին ծառեր. և Լիբանանեան զոյգ զրօշակները: Մեծ դուռէն մինչև եկեղեցիին մուտքը փռուած էր գորգերով: Կարգապահութեան իր հսկէին ոստիկան զինուորներ:

Թափօրը եկեղեցի հասաւ 3.30-ին: Նուազախումբը զարկաւ Յունի. և Լիբանանեան քայլերդները: Ապա զարգաց դառն «Հրաշափառնով առաջնորդեց եկեղեցի: Եկեղեցական արարողութիւններէ յետոյ, ամբողջ Հայրապետը խօսեցաւ կարճ քարոզ մը, և ըրաւ իր հաւատարմութեան ուխտը: Պէյրուքի կաթ. փոխ. Կարօեան ըրեցապ. յանուն Լիբանանայութեան շնորհաւորեց վեհափառը, սրտազին բարեմաղթութիւններով:

Ընդունելութիւնները եղան մանկապարտէզի սրահին մէջ, ուր Տօքթ. Թօփեան յանուն Ազգային Վարչութեան, ուղերձ մը խօսեցաւ:

Շնորհաւորութեան եկած էին կաթողիկէ հայոց պատ. Փոխ. Արհ. Ար. փարեան գերապաժառ, Զմայեան ուխտէն Պատուհասեան վարդապետ, իսկ բողոքական հայոց կողմէ վեր. Կեօքէօղեան և Կ. Հաւաքեան:

կան չորս գործակալներու ընկերակցութեամբ ինքնաշարժով հոն հասաւ, բայց շատ ուշ էր, Պէլկարտ արդէն իսկ խոյս տուած էր:

Կուզը յիշոց մը արձակեց: Յետոյ լարեղութեամբ յարեց.

— Անպայման պիտի է որ իր հետքը գտնենք:

— Ատիկա եղած է արդէն պատասխանեց աստիճանով մարդը յաղթական կերպարանով մը:

Ապա լեզու քեքեղութեամբ մը լի խնդիր մ'ըմռաց.

— Շնորհաւորութիւններ:

Սարգէթով մարդը շարունակեց.

— Ոստիկանութեան հեռաձայնէ վերջ, շտապեցի վերադառնալ ապարանքին մօտերը և սկսայ կրկին լրտեսել: Կը վախճայի որ Պէլկարտ ոստիկանութեան ժամանումէն առաջ կը հեռանար տունէն. սակայն հեռաձայնի հարուածէն հազիւ թէ քսան վայրկեան յետոյ ոստիկանութեան պաշտօնները հասան... Բաւական ասան սպասեցի... Ինձի համար սխալմունք չկար... Մենք արդէն և իր մարդիկը թռչունը բոյնին մէջ գտած էին... Անկասկած զայն եկելու վրայ էին և որովհետեւ կ'ամապարէի ձեզ տեսնելու, դացի հեծելանքս առնելու, զոր պահած էի մացառուարի մը մէջ Լէյլակներու ուղիին վրայ:

Բայց այն վայրկեանին որ այդ փողոցը մտնելու վրայ էի, ինչ կ'ուզէր որ տեսնեմ: Պէլկարտը որ ճիշդ պարտէզի փողոցի դրան առջև կեցող ինքնաշարժ մը մէջ կը ցատէր... և ճանչցայ մեր բարեկամ Շանթըքը, որ ձեռքով նշան կուտար ինքնաշարժի վարիչին խոյս տալու:

Ինքնաշարժը իսկոյն ճամբայ ելաւ և զառանի ոստիկանը կրկին պարտէզ մտաւ: Վայրկեան մը

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Յրանաւական Կառավարութիւնը վստահութիւն կը չափի

ՓԱՐԻԶ, 11 ՄԱՅԻՍ. — Յրանաւական կառավարութիւնը 52ի դէմ 430 ֆոէի վստահութիւն չափեցաւ:

Ընդդիմադիրները կը բողոքեն

ԳԱՀԻՐԷ, 11 ՄԱՅԻՍ. — Ընդդիմադիր կուսակցութիւններ ժողով Թագաւորին բողոքագիր մը ներկայացուցին Սօյի փառայի ընտրական օրինագծին դէմ:

Հայաստանի շարժի մասին

ՄՈՍԿՈՒՍ, 7 ՄԱՅԻՍ. — Հայաստանի վերջին երկրաշարժին պատճառաւ վնասներ, 51 զիւղ ֆանգուած, 390 մեռեալ, և 7420 վիրաւորներ են:

Ժամկալստ Իրագի մէջ

ՊԱՐԻԶ, 8 ՄԱՅԻՍ. — Երկրին գտնական կողմերը ժամկալս ծագեցաւ. Կառավարութիւնը առաջապահական միջոցներ ձեռք կ'առնէ:

Իրագի Բիւրո ըմբոստները անձնատուր կըլլան

ՄՈՒՍԿՈՒՍ, 7 ՄԱՅԻՍ. — 18 փոքր պետք իրենց գէնեթով, անձնատուր եղան: Ըմբոսներուն պիտի Շէյխ Մահմուտ ֆանի մը օրէն Պաղտաս կերպ իրաւի իշխանութեանց անձնատուր ըլլալու համար:

Ալ. Յոնս Թագ. Հայտի պայքարի

ԲԱՐԻԶ. — Ալ. Յոնս Թագաւոր յայտարարեց թէ Հայիսի պայքարի Սպանիոյ հանրապետութեան դէմ:

Փորթուկալ կը խաղաղի

ԼԻՉԳՈՆ, 8 ՄԱՅԻՍ. — Կիւնի մէջ ծագած ըմբոսութիւնը վնջ գտաւ: Մահէրի և Աստուրի կողմներու ըմբոսները Կանաչ Կիլոս կողմերը պիտի աւազուին:

Սպանիական հանրապետութիւնը եւ Յրանա

ԲԱՐԻԶ, 8 (Հ.). — Մերակոյսն ալ, երեսփոխանական ժողովին պէս, իր համակրութիւնը փոխարկեց հանգիստ Սպանիական հանրապետութեան: Պուլեոս Ալիսի սպանիական դեսպան Մ. Տանկիւա Բարիկի սպանիական դեսպան անուանուեցաւ:

Իրիկուան ժամը 5-ին, վեհ. Կաթողիկոսները օթոներու մեծ թափօրով մը մեկնեցան Անթիպիս:

ԱՆԴՐ. — ՆԱՀՐ. — Հոս, տեղւոյն թաղականութիւնը կանգնած էր հոյակապ կամար մը, և խուռն բազմութիւն մը կը լեցունէր ամէն կողմ: Վեհափառները հոս ևս ժողովուրդը օրհնելէ յետոյ, մեկնեցան Անթիպիս:

ԵՄԱԳՈՅԸ ԿԸ ՊԱՏԻՆ. — Ինչպէս ամէն տեղ, հոս ալ զաշնակցութեան եռագոյնը եկած էր բոյնի տեղ բոյնի: Դանի մը չափահասներ առանցին օթո մը նստած, պարզած էին խոշոր եռագոյն մը, և կը պոռային — «Կեցցէ՛ եռագոյնը, կեցցէ՛ եռագոյնը...»: Դանի մը հնչական երկտասարդներ յարձակեցան անոնց վրայ և պատեցին «յաղթական եռագոյնը»: Ոստիկաններ միջամտեցին և արգելեցին զաշնակ եռագոյնին դուրս հանուելը:

րէլիկ ձեւ ծագումը, որուն մէջ այնքան յաջող էիք:

— Շատ լաւ... պատասխանեց լրագրողը:

— Ուրեմն, կարգաւորական ձեւ այստեղ... վերսկսաւ զառանգել ոստիկաններու թագաւորը... բայց յայտնաւեցաւ... հսկողութեանը ներքեւ...

Սե Գորովալից շարժումով մը, Դուքիլը ցոյց տուաւ անոր, որ վայրկեանէ մ'ի վեր արդէն, դուրս ելած էր իր թաքստոցէն և իր խօսեցեալին ժպիտ մը կ'ուղղէր, որ համակ սէր էր...

Ժաք յառաջացաւ դէպի Դուքիլ:

— Օրիորդ, ըսաւ ան... հայրերիդ ձեզ պիտի ըսէ...

— Ոչինչ, որտեղ անոնց Գուլի... քանի որ ամէն բան լսեցի...

— Ինչպէս կ'ըլլայ:

— Հոս էի ես, հոգամարդիւն նստել:

— Անկարելի է.

— Գաղտնի ոստիկանի աղբիւն եմ և...

— Սե ամենապաշտօնի կ'իմ մը պիտի ըլլաք:

Անոնց ձեռքերը իրար միացան... և ատիկա համար ու նստուածային ուխտը եղաւ այդ երկու հագներուն...

Շանթըքը գործող տակաւորով մը դիտեց զանոնք, յետոյ մըմաց.

— Այժմ վստահ եմ, այլևս տունէն դուրս չի պիտի ելլէ:

4. *Strophomena* (2-10)